# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
## ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔ

***18 փետրվար 2025թ.***

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 08/02
# ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Զարինե Ղամբարյանը, Հասմիկ Վարդանյանը, Քրիստինե Շահնազարյանը, Նարեկ Ալիխանյանը, Արմինե Հովհաննիսյանը, Սուրեն Մելիքյանը, Արտակ Բոջիկյանը, Վարդան Ավագյանը, Արմենուհի Մաիլյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝** Ադամ Սարգսյան, Աշխեն Ամիրխանյան, Ալեքսանդր Հարությունյան, Մխիթար Հովհաննիսյան, Հովհաննես Նաղդալյան, Գեվորգ Ամիրխանյան, Մարինե Սահակյան, Գառնիկ Վարդանյան, Վարդան Գրիգորյան, Գագիկ Շահնազարյան, Լիպարիտ Սանթրոսյան

**Նիստը վարում էր ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դավիթ Սարգսյանը**

**Նիստը արձանագրում էր ՝ Սոնա Եգանյանը**

**ԼՍԵՑԻՆ**

***ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.*

*Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.*

1. Դիլիջան համայնքի ավագանու անդամ Արմինե Ռազմիկի Հովհաննիսյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
2. Դիլիջան համայնքի Գոշ գյուղի Մ. Գոշի փողոց 3-րդ նրբ. թիվ 16/1 հասցեի 0.03415հա հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
3. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամարինի փողոց թիվ 36/5 հասցեի 284.0քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
4. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց թիվ 50/6 հասցեի քոթեջը պարիսպը և վերջիններիս զբաղեցրած 76. 3քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
5. Գույքի օտարման մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
6. Գույքի օտարման մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
7. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 288/4 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 28. 9քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
8. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Այգեստան փողոց թիվ 2/21 հասցեի տնտեսական շինությունը և վերջինիս զբաղեցրած 41. 3քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
9. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց թիվ 28/2 հասցեի տնտեսական շինությունը և վերջինիս զբաղեցրած 13. 5քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
10. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց թիվ 2/4 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 42.2քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
11. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 179/11 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 17. 9քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
12. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Մյասնիկյան 53 հասցեի մշակույթի պալատի շենքը և սպասարկման հողամասը «Դիլիջանի մշակույթի պալատ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով անժամկետ տրամադրելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
13. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 11-003-0296-0015 ծածկագրով 274.3քմ մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան

14. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոց թիվ 32/2 հասցեի 1240.0քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
15. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
16. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
17. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց թիվ 167 հասցեի ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 15․8քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
18. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոց թիվ 158 հասցեի թվով 2 տնտեսական շինությունները և վերջիններիս զբաղեցրած 505․0քմ հողամասն վարձակալության իրավունքով տրամադրելու համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
19. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
20. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2025 թվականի տեղական բյուջեի վարչական մասում փոփոխություն կատարելու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
21.Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Թբիլիսյան խճուղի 11/1 հասցեում բենզալցակայանի գործունեության վերաբերյալ նախնական համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
22. Դիլիջան համայնքի 2025 թվականի տեղական բյուջեի վարչական մասի եկամուտների և ծախսերի ավելացման մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
23. Դիլիջան համայնքի Շահումյան փողոցի 17/8, 17/10, 17/14, 17/17 հասցեներում «Մայրի» բազմաֆունկցիոնալ համալիրի գործունեության վերաբերյալ նախնական համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
24. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ–Նովայի փողոցի 37 հասցեում բնակելի շենքի գործունեության վերաբերյալ նախնական համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
25. Դիլիջան համայնքի Պարզ լճի փողոց 14/2 եվ 14/3 հողամասերում բնակելի և հյուրանոցային համալիրի գործունեության վերաբերյալ նախնական համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան
26. Դիլիջան համայնքի Պարզ լճի փողոց 26 հողամասում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի գործունեության վերաբերյալ նախնական համաձայնություն տալու մասին:
Զեկ. Դավիթ Սարգսյան

*27. Դիլիջան համայնքի Աղավնավանք բնակավայրում կրթահամալիրի գործունեության վերաբերյալ նախնական համաձայնություն տալու մասին:*
*Զեկ. Դավիթ Սարգսյան*
*28. Դիլիջան համայնքում 2024 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի ամփոփ հաշվետվությունը հաստատելու մասին:*
*Զեկ. Դավիթ Սարգսյան*
*29. Դիլիջան համայնքի վարչական սահմաններում գտնվող մի շարք ծածկագրով հողամասեր Դիլիջանի համայնքի հողերի ֆոնդում ընդգրկելու մասին:*
*Զեկ. Դավիթ Սարգսյան*
*30. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան խոշորացված համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում 11-023-0376-0002 ծածկագրով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:*
*Զեկ. Դավիթ Սարգսյան*
*31. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 571.3քմ ընդհանուր մակերեսով թվով 4 հողամասերը, հատուկ պահպանվող տարածքների հողերից 5380.3քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից 30.0քմ մակերեսով հողամասը, գյուղատնտեսական նշանակության հողերից 1510.0քմ մակերեսով հողամասը աճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու, ինչպես նաև մեկնարկային գները հաստատելու մասին:*
*Զեկ. Դավիթ Սարգսյան*
*32. Դիլիջանի համայնքապետարանի հաշվեկշռում առկա թվով 5 հատ ծառայողական ավտոմեքենաները աճուրդային կարգով օտարելուն համաձայնություն տալու մասին:*
*Զեկ. Դավիթ Սարգսյան*
*33.* Դիլիջան համայնքի ավագանու հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
*Զեկ. Դավիթ Սարգսյան*

Համայնքի ղեկավարը «Տեղական ինքնակառավարման մասին օրենքի» 70-րդ հոդվածի պահանջներին համապատասխան հրապարակեց համայնքի ավագանու «Ապրելու Երկիր» խմբակցության անդամ Արմինե Ռազմիկի Հովհաննիսյանի՝ ավագանու անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին դիմումը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 858-Ա)*

<u>**ԼՍԵՑԻՆ**</u>

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՇ ԳՅՈՒՂԻ Մ. ԳՈՇԻ ՓՈՂՈՑ 3-ՐԴ ՆՐԲ. ԹԻՎ 16/1 ՀԱՍՑԵԻ 0.03415ՀԱ ՀՈՂԱՄԱՍ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Դիլիջան համայնքի ղեկավարին են դիմել քաղաքացիներ Հերմինե Արամի Սարգսյանը, Ժիրայր Արշակի Բաբինյանը և Արմեն Արշակի Բաբինյանը՝ Դիլիջան համայնքի Գոշ գյուղի Մ. Գոշի փողոց 1-ին նրբ. թիվ 4 հասցեի, իրենց սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան սպասարկման 2380.0քմ հողամասին կից գտնվող /Մ. Գոշի փողոց 3-րդ նրբ. թիվ 16/1 հասցեի/ 341.5քմ մակերեսով հողամասն ընդլայնման կարգով իրենց օտարելու խնդրանքով:
Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 341.5քմ հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման տասնվեցերորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան համայնքի Գոշ գյուղի Մ. Գոշի փողոց 3-րդ նրբ. թիվ 16/1 հասցեի 341.5քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 175873 /հարյուր յոթանասունհինգ հազար ութ հարյուր յոթանասուներեք/ ՀՀ դրամ արժեքով օտարել քաղաքացիներ Հերմինե Արամի Սարգսյանին, Ժիրայր Արշակի Բաբինյանին և Արմեն Արշակի Բաբինյանին:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Գոշ գյուղի Մ. Գոշի փողոց 3-րդ նրբ. թիվ 16/1 հասցեի 341.5քմ հողամասն, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով, 175873 /հարյուր յոթանասունհինգ հազար ութ հարյուր յոթանասուներեք/ ՀՀ դրամ արժեքով քաղաքացիներ Հերմինե Արամի Սարգսյանին, Ժիրայր Արշակի Բաբինյանին և Արմեն Արշակի Բաբինյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 859-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱՄԱՐԻՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 36/5 ՀԱՍՑԵԻ 284.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Դիլիջանի համայնքի ղեկավարին է դիմել քաղ. Արման Ազատի Անդրիասյանը ՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամարինի փողոց թիվ 36/1 հասցեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան սպասարկման 821.0քմ հողամասին կից գտնվող /Կամարինի փողոց թիվ 36/5 հասցեի/ 284.0քմ մակերեսով հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:

Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 284.0քմ հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամարինի փողոց թիվ 36/5 հասցեի 284.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 1940941 /մեկ միլիոն ինը հարյուր քառասուն հազար ինը հարյուր քառասունմեկ/ ՀՀ դրամ արժեքով օտարել քաղաքացի Արման Ազատի Անդրիասյանին:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամարինի փողոց թիվ 36/5 հասցեի 284.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 1940941 /մեկ միլիոն ինը հարյուր քառասուն հազար ինը հարյուր քառասունմեկ/ ՀՀ դրամ արժեքով քաղաքացի Արման Ազատի Անդրիասյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 860-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 50/6 ՀԱՍՑԵԻ ՔՈԹԵՋԸ ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 76. 3ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. դեկտեմբերի 05-ի թիվ 1281-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց, թիվ 50/6 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Գագիկ Բաղդասարի Թովմասյանի կողմից ինքնակամ կառուցված 55. 5քմ արտաքին մակերեսով քոթեջի և 8. 76քմ արտաքին մակերեսով պարսպի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 15012025-11-0011/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Գագիկ Թովմասյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց, թիվ 50/6 հասցեի քոթեջը՝ 55. 5քմ արտաքին մակերեսով, պարիսպը՝ 8. 76քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 76. 3քմ հողամասը, համապատասխանաբար, 1156842 դրամ, 182594 դրամ և 521458 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր

համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված քոթեջը, պարիսպը և վերջինիս զբաղեցրած 76․3քմ հողամասը քաղ. Գագիկ Բաղդասարի Թովմասյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց, թիվ 50/6 հասցեի քոթեջը 55․5քմ արտաքին մակերեսով, պարիսպը 8․76քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 76․3քմ հողամասը, համապատասխանաբար, 1156842 դրամ, 182594 դրամ և 521458 դրամ արժեքներով քաղ. Գագիկ Բաղդասարի Թովմասյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 861-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Դիլիջան համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել՝ Դիլիջան քաղաքի Գայի փողոցի թիվ 78 շենքի թիվ 21, երկու սենյականոց բնակարանն, ուղղակի վաճառքի միջոցով, վարձակալ Էլմիրա Խաչատուրի Պողոսյանի ընտանիքին օտարելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող, Դիլիջան քաղաքի Գայի փողոցի թիվ 78 շենքի թիվ 21, երկու սենյականոց՝ 72,5ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը վարձակալ Էլմիրա Խաչատուրի Պողոսյանի ընտանիքին, ուղղակի վաճառքի միջոցով, 108750 դրամ արժեքով (մեկ քառակուսի մետրի համար սահմանված է 1500 դրամ) օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 862-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ***

*(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)*

Դիլիջան համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել՝ Դիլիջան քաղաքի Գայի փողոցի թիվ 82 շենքի թիվ 12, երկու սենյականոց բնակարանն, ուղղակի վաճառքի միջոցով, վարձակալ Նարինե Արարատի Մադաթյանի ընտանիքին օտարելու մասին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն համայնքի սեփականություն հանդիսացող, Դիլիջան քաղաքի Գայի փողոցի թիվ 82 շենքի թիվ 12, երկու սենյականոց՝ 69,1ք.մ. ընդհանուր մակերեսով բնակարանը վարձակալ Նարինե Արարատի Մադաթյանի ընտանիքին, ուղղակի վաճառքի միջոցով, 103650 դրամ արժեքով (մեկ քառակուսի մետրի համար սահմանված է 1500 դրամ) օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 863-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 288/4 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 28. 9ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. դեկտեմբերի 06-ի թիվ 1290-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց, թիվ 288/4 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Հարություն Աշոտի Հովսեփյանի կողմից ինքնակամ կառուցված 28. 9քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 26122024-11-0005/: Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Հարություն Հովսեփյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց, թիվ 288/4 հասցեի ավտոտնակը՝ 28. 9քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 28. 9քմ հողամասը, համապատասխանաբար, 66933 դրամ և 197512 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 28. 9քմ հողամասը քաղ. Հարություն Աշոտի Հովսեփյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց, թիվ 288/4 հասցեի ավտոտնակը՝ 28. 9քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 28. 9քմ հողամասը, համապատասխանաբար, 66933 դրամ և 197512

դրամ արժեքներով քաղ. Հարություն Աշոտի Հովսեփյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 864-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՅԳԵՍՏԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2/21 ՀԱՍՑԵԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 41. 3ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. դեկտեմբերի 05-ի թիվ 1278-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Այգեստան փողոց, թիվ 2/21 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Ժիրայր Վարուժանի Ալիխանյանի կողմից ինքնակամ կառուցված 41. 3քմ արտաքին մակերեսով տնտեսական շինության նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 17122024-11-0043/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Ժիրայր Ալիխանյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Այգեստան փողոց, թիվ 2/21 հասցեի տնտեսական շինությունը՝ 41. 3քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 41. 3քմ հողամասը, համապատասխանաբար, 95651 դրամ և 282257 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված տնտեսական շինությունը և վերջինիս զբաղեցրած 41. 3քմ հողամասը քաղ. Ժիրայր Վարուժանի Ալիխանյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Այգեստան փողոց, թիվ 2/21 հասցեի տնտեսական շինությունը՝ 41. 3քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 41. 3քմ հողամասը, համապատասխանաբար, 95651 դրամ և 282257 դրամ արժեքներով քաղ. Ժիրայր Վարուժանի Ալիխանյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 865-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 28/2 ՀԱՍՑԵԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 13. 5ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. դեկտեմբերի 05-ի թիվ 1279-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց, թիվ 28/2 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Ռոբերտ Բենիկի Թամրազյանի կողմից ինքնակամ կառուցված 13. 5քմ արտաքին մակերեսով տնտեսական շինության նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 24122024-11-0029/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Ռոբերտ Թամրազյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց, թիվ 28/2 հասցեի տնտեսական շինությունը՝ 13. 5քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 13. 5քմ հողամասը, համապատասխանաբար, 62532 դրամ և 92264 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված տնտեսական շինությունը և վերջինիս զբաղեցրած 13. 5քմ հողամասը քաղ. Ռոբերտ Բենիկի Թամրազյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց, թիվ 28/2 հասցեի տնտեսական շինությունը՝ 13. 5քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 13. 5քմ հողամասը, համապատասխանաբար, 62532 դրամ և 92264 դրամ արժեքներով քաղ. Ռոբերտ Բենիկի Թամրազյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 866-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2/4 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 42.2ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2025թ. հունվարի 10-ի թիվ 15-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց, թիվ 2/4 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Նիկողայոս Զավենի Եղիազարյանի կողմից ինքնակամ կառուցված 42․2քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 27012025-11-0031/: Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Նիկողայոս Եղիազարյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց, թիվ 2/4 հասցեի ավտոտնակը՝ 42․2քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 42․2քմ հողամասը, համապատասխանաբար, 97736 դրամ և 288408 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 42․2քմ հողամասը քաղ. Նիկողայոս Զավենի Եղիազարյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Շահումյան փողոց, թիվ 2/4 հասցեի ավտոտնակը՝ 42․2քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 42․2քմ հողամասը, համապատասխանաբար, 97736 դրամ և 288408 դրամ արժեքներով քաղ. Նիկողայոս Զավենի Եղիազարյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 867-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 179/11 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 17․9ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2025թ. հունվարի 16-ի թիվ 31-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 179/11 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում (հողամասը ընդհանուր բաժնային սեփականություն է 2-րդ հարկի սեփականատիրոջ հետ) քաղ. Սուսաննա Պարգևի Սամվելյանի կողմից ինքնակամ կառուցված 17․9քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 30012025-11-0011/: Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Սուսաննա Սամվելյանին՝ Դիլիջան

համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 179/11 հասցեի ավտոտնակը՝ 17․ 9քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 17․ 9քմ հողամասը (հողամասի 1/2 մասը) համապատասխանաբար, 48778 դրամ և 94099 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 17․ 9քմ հողամասը (հողամասը ընդհանուր բաժնային սեփականություն է 2-րդ հարկի սեփականատիրոջ հետ) քաղ. Սուսաննա Պարգևի Սամվելյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կալինինի փողոց թիվ 179/11 հասցեի ավտոտնակը՝ 17․ 9քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 17․ 9քմ հողամասը (հողամասը ընդհանուր բաժնային սեփականություն է 2-րդ հարկի սեփականատիրոջ հետ) համապատասխանաբար, 48778 դրամ և 94099 դրամ արժեքներով քաղ. Սուսաննա Պարգևի Սամվելյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 868-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ 53 ՀԱՍՑԵԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏԻ ՇԵՆՔԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ «ԴԻԼԻՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Դիլիջան համայնքի մշակույթի պալատի հիմնանորոգումից հետո հետագա շահագործումն ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող գույքը՝ Դիլիջան քաղաքի, Մյասնիկյան փողոցի թիվ 53 հասցեի մշակույթի պալատի շենքը՝ 2497.7 քմ ընդհանուր մակերեսով և շենքի սպասարկման հողամասը՝ 0.1860 հա մակերեսով (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 1449910) անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ տրամադրել «Դիլիջանի մշակույթի պալատ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ Դիլիջան համայնքում մշակութային գործունեության իրականացման նպատակով:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 688-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող գույքը՝ Դիլիջան քաղաքի, Մյասնիկյան փողոցի թիվ 53 հասցեի մշակույթի պալատի շենքը՝ 2497.7 քմ ընդհանուր մակերեսով և շենքի սպասարկման հողամասը՝ 0.1860 հա մակերեսով (անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 1449910) անհատույց օգտագործման իրավունքով, անժամկետ «Դիլիջանի մշակույթի պալատ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը տրամադրելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 869-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ 11-003-0296-0015 ԾԱԾԿԱԳՐՈՎ 274.3ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Դիլիջան համայնքի ղեկավարին է դիմել քաղ. Արտաշես Վալերիի Մովսեսյանը՝ իր սեփականությունը հանդիսացող Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 11-003-0296-0016 ծածկագրով, 5840.7քմ մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասին կից գտնվող, 11-003-0296-0015 ծածկագրով 274.3քմ մակերեսով հողամասն ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 274.3քմ հողամասը գտնվում է գյուղատնտեսական նշանակության հողերի կազմում, որպես վարելահող:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 11-003-0296-0015 ծածկագրով 274.3քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 22493 /քսաներկու հազար չորս հարյուր իննսուներեք/ դրամ արժեքով օտարել քաղ. Արտաշես Վալերիի Մովսեսյանին:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի 11-003-0296-0015 ծածկագրով 274.3քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 22493 /քսաներկու հազար չորս հարյուր իննսուներեք/ դրամ արժեքով, քաղ. Արտաշես

Վալերիի Մովսեսյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 870-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 32/2 ՀԱՍՑԵԻ 1240.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Դիլիջանի համայնքի ղեկավարին է դիմել քաղ. Հաջի Խդրի Հաջիևը՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոց թիվ 32 հասցեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող բնակելի տան սպասարկման 1240.0քմ հողամասին կից գտնվող /Կամոյի փողոց թիվ 32/2 հասցեի/ 1240.0քմ մակերեսով հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 1240.0քմ հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոց թիվ 32/2 հասցեի 1240.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 8474532 /ութ միլիոն չորս հարյուր յոթանասունչորս հազար հինգ հարյուր երեսուներկու/ ՀՀ դրամ արժեքով օտարել քաղաքացի Հաջի Խդրի Հաջիևին:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոց թիվ 32/2 հասցեի 1240.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 8474532 /ութ միլիոն չորս հարյուր յոթանասունչորս հազար հինգ հարյուր երեսուներկու/ ՀՀ դրամ արժեքով քաղաքացի Հաջի Խդրի Հաջիևին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 871-Ա)*

**LՍԵՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետի և 82.1-րդ հոդվածի պահանջներով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 872-Ա)*

**LՍԵՑԻՆ**

***ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, «Բյուջետային համակարգի» մասին օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի պահանջներով, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Դիլիջան համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի (հավելվածը կցվում է):

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 873-Ն)*

**LՍԵՑԻՆ**

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 167 ՀԱՍՑԵԻ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 15. ՑՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2025թ. հունվարի 09-ի թիվ 12-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց, թիվ 167 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Մարտիկ Աղասարի Վերանյանի կողմից ինքնակամ կառուցված 15. 8քմ արտաքին մակերեսով ավտոտնակի նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 27012025-11-0072/:
Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Մարտիկ Վերանյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց, թիվ 167 հասցեի ավտոտնակը՝ 15. 8քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 15. 8քմ հողամասը, համապատասխանաբար, 36593 դրամ և 107982 դրամ արժեքներով ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված ավտոտնակը և վերջինիս զբաղեցրած 15. 8քմ հողամասը քաղ. Մարտիկ Աղասարի Վերանյանին օտարելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Սայաթ-Նովայի փողոց, թիվ 167 հասցեի ավտոտնակը՝ 15. 8քմ արտաքին մակերեսով և վերջինիս զբաղեցրած 15. 8քմ հողամասը, համապատասխանաբար, 36593 դրամ և 107982 դրամ արժեքներով քաղ. Մարտիկ Աղասարի Վերանյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 874-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱՄՈՅԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 158 ՀԱՍՑԵԻ ԹՎՈՎ 2 ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԶԲԱՂԵՑՐԱԾ 505. 0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2024թ. նոյեմբերի 22-ի թիվ 1222-Ա որոշմամբ, Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոց, թիվ 158 հասցեի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում քաղ. Կիմա Երանդիկի Մարգարյանի կողմից ինքնակամ կառուցված 119. 2487քմ և 152. 7598քմ արտաքին մակերեսներով թվով 2 տնտեսական շինությունների նկատմամբ ճանաչվել է համայնքի սեփականության իրավունքը և օրինականացվել է /սեփականության իրավունքի վկայական թիվ՝ 07012025-11-0050/:

Քանի որ տվյալ շինությունները կառուցվել են ջրապահպան անօտարելի գոտում, ուստի գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղ. Կիմա Մարգարյանին՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոց, թիվ 158 հասցեի թվով 2 տնտեսական շինությունները՝ 119. 2487քմ և 152. 7598քմ արտաքին մակերեսներով և վերջիններիս զբաղեցրած 505. 0քմ հողամասը, վարձակալության իրավունքով 345366 դրամ տարեկան վարձավճարով, մինչև 2060թ. դեկտեմբերի 31-ը ժամկետով, որի վերաբերյալ վերջինս տվել է իր համաձայնությունը:
Համայնքի ղեկավարը նշված թվով 2 տնտեսական շինությունները և վերջիններիս զբաղեցրած 505. 0քմ հողամասը քաղ. Կիմա Երանդիկի Մարգարյանին վարձակալության իրավունքով տրամադրելու վերաբերյալ առաջարկությունը ներկայացրել է համայնքի ավագանու համաձայնեցմանը:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի Կամոյի փողոց, թիվ 158 հասցեի թվով 2 տնտեսական շինությունները՝ 119. 2487քմ և 152. 7598քմ արտաքին մակերեսներով և վերջիններիս զբաղեցրած 505. 0քմ հողամասը, 345366 դրամ տարեկան վարձավճարով մինչև 2060թ. դեկտեմբերի 31-ը ժամկետով քաղ. Կիմա Երանդիկի Մարգարյանին վարձակալության իրավունքով տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 875-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4. 1 կետով և 82. 1-ին հոդվածի 6-րդ մասով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 876-Ա)*

**LUԵՑԻՆ**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33 -րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. «01-01-01» Դիլիջան համայնք /Դիլիջանի քաղաքապետարան/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվի 4264 /տրանսպորտային նյութեր/ ծախսային հոդվածից նվազեցնել՝ 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ,

2. «01-03-03» Դիլիջան համայնք /Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման նախահաշվի 4235 /կառավարչական ծառայություններ/ ծախսային հոդվածին ավելացնել՝ 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 877-Ն)*

**LUԵՑԻՆ**

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ 11/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԲԵՆԶԱԼՑԱԿԱՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16–րդ հոդվածի 3-րդ կետով՝

1.Տալ նախնական համաձայնություն Դիլիջան համայնքի Թբիլիսյան խճուղի 11/1 հասցեում բենզալցակայանի  գործունեության վերաբերյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 878-Ա)*

**LՍԵՑԻՆ**

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33 -րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. Դիլիջան համայնքի 2025 թվականի տեղական բյուջեի վարչական մասի Պաշտոնական դրամաշնորհներ՝ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ տողը ավելացնել 744.9 հազար դրամով և ուղղել վարչական բյուջեի «01-01-01» բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 4823 /պարտադիր վճարներ/ հոդվածին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից առաջացած իրավահարաբերությունների վրա:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 879-Ն)*

**LՍԵՑԻՆ**

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ 17/8, 17/10, 17/14, 17/17 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ «ՄԱՅՐԻ» ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ՀԱՄԱԼԻՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16–րդ հոդվածի 3-րդ կետով՝

1.Տալ նախնական համաձայնություն Դիլիջան քաղաքի Շահումյան փողոցի 17/8, 17/10, 17/14, 17/17 հասցեներում «Մայրի» բազմաֆունկցիոնալ համալիրի գործունեության վերաբերյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 880-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ–ՆՈՎԱ ՓՈՂՈՑԻ 37 ՀԱՍՑԵՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16–րդ հոդվածի 3-րդ կետով՝

1.Տալ նախնական համաձայնություն Դիլիջան քաղաքի Սայաթ–Նովա փողոցի 37 հասցեում բնակելի շենքի գործունեության վերաբերյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 881-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐՁ ԼՃԻ ՓՈՂՈՑ 14/2 ԵՎ 14/3 ՀՈՂԱՄԱՍԵՐՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16–րդ հոդվածի 3-րդ կետով՝

1.Տալ նախնական համաձայնություն Դիլիջան համայնքի Պարզ լճի փողոց 14/2 և 14/3 հողամասերում բնակելի և հյուրանոցային համալիրի գործունեության վերաբերյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 882-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՐԶ ԼՃԻ ՓՈՂՈՑ 26 ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԲԱԶՄԱՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16–րդ հոդվածի 3-րդ կետով՝

1.Տալ նախնական համաձայնություն Դիլիջան համայնքի Պարզ լճի փողոց 26 հողամասում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի գործունեության վերաբերյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 883-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՂԱՎՆԱՎԱՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ կետով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16–րդ հոդվածի 3-րդ կետով՝

1.Տալ նախնական համաձայնություն Դիլիջան համայնքի Աղավնավանք բնակավայրում կրթահամալիրի գործունեության վերաբերյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 884-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 11-րդ հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Դիլիջան համայնքում 2024 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի ամփոփ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 885-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԻ ՇԱՐՔ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐ ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԵՐԻ ՖՈՆԴՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Դիլիջանի համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի կադաստրային քարտեզի՝

- 11-003-0295-0012 կադաստրային ծածկագրով 0.0074հա հողամասը,
- 11-003-0295-0009 կադաստրային ծածկագրով 0.0046հա հողամասը,
- 11-003-0295-0010 կադաստրային ծածկագրով 0.03012հա հողամասը,
- 11-003-0295-0011 կադաստրային ծածկագրով 0.0050հա հողամասը,
- 11-003-0040-0104 կադաստրային ծածկագրով 0.34844հա հողամասը,

- 11-003-0040-0351 կադաստրային ծածկագրով 0.03831հա հողամասը,
- 11-003-0110-0094 կադաստրային ծածկագրով 0.03292հա հողամասը,
- 11-003-0017-0024 կադաստրային ծածկագրով 0.01091հա հողամասը,
- 11-003-0258-0002 կադաստրային ծածկագրով 0.05702հա հողամասը,
- 11-003-0258-0003 կադաստրային ծածկագրով 0.00494հա հողամասը,
- 11-003-0258-0004 կադաստրային ծածկագրով 0.01955հա հողամասը,
- Թեղուտ գյուղի 11-029-0028-0036 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 0.05հա հողամասը,
- Թեղուտ գյուղի 11-029-0028-0036 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 0.05059հա հողամասը,

համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված են որպես ֆիզիկական անձանց սեփականություն:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Դիլիջան համայնքի Դիլիջան քաղաքի կադաստրային քարտեզի՝

- 11-003-0295-0012 կադաստրային ծածկագրով 0.0074հա հողամասը,
- 11-003-0295-0009 կադաստրային ծածկագրով 0.0046հա հողամասը,
- 11-003-0295-0010 կադաստրային ծածկագրով 0.03012հա հողամասը,
- 11-003-0295-0011 կադաստրային ծածկագրով 0.0050հա հողամասը,
- 11-003-0040-0104 կադաստրային ծածկագրով 0.34844հա հողամասը,
- 11-003-0040-0351 կադաստրային ծածկագրով 0.03831հա հողամասը,
- 11-003-0110-0094 կադաստրային ծածկագրով 0.03292հա հողամասը,
- 11-003-0017-0024 կադաստրային ծածկագրով 0.01091հա հողամասը,
- 11-003-0258-0002 կադաստրային ծածկագրով 0.05702հա հողամասը,
- 11-003-0258-0003 կադաստրային ծածկագրով 0.00494հա հողամասը,
- 11-003-0258-0004 կադաստրային ծածկագրով 0.01955հա հողամասը,
- Թեղուտ գյուղի 11-029-0028-0036 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 0.05հա հողամասը,
- Թեղուտ գյուղի 11-029-0028-0036 կադաստրային ծածկագրով հողամասի մի մասը՝ 0.05059հա հողամասը,

որոնք համայնքի կադաստրային քարտեզում սխալմամբ հաշվառված են որպես ֆիզիկական անձի սեփականություն, ընդգրկել Դիլիջան համայնքի հողերի ֆոնդում, որպես Բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման հողեր:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 886-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ***

***ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ 11-023-0376-0002 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդված 5-րդ և 9-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2025թ. հունվարի 22-ի թիվ 2/փ-21 դրական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան խոշորացված համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում 11-023-0376-0002 ծածկագրով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:
2. Հիմք ընդունելով <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդվածի 5-րդ մասը, սույն որոշման 1-ին կետով սահմանված, Դիլիջան համայնքի, Գոշ գյուղի 11-023-0376-0002 ծածկագրով, 0.159հա հողամասը, ըստ նպատակային նշանակության դիտարկել որպես Բնակավայրերի հող, ըստ գործառնական նշանակության՝ բնակելի կառուցապատման:
3. <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդվածի 14-րդ և 30-րդ մասերով սահմանված կարգով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում, արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:
4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով արտացոլել սույն որոշումից բխող դրույթների փոփոխությունները Դիլիջան համայնքի ավագանու 03.10.2022թ. թիվ 198-Ա և ՀՀ Տավուշի մարզպետի 26.10.2022թ. թիվ 299-Ա որոշումներով հաստատված Դիլիջան խոշորացված համայնքի միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթում:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 887-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ 571.3ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 4 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ, ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ 5380.3ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ***

***ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 30.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ, ԳՅՈՒՂԱՏՆՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 1510.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Դիլիջան համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվել Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 571.3քմ ընդհանուր մակերեսով թվով 4 հողամասերը, հատուկ պահպանվող տարածքների հողերից 5380.3քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից 30.0քմ մակերեսով հողամասը, գյուղատնտնտեսական նշանակության հողերից 1510.0քմ մակերեսով հողամասը աճուրդի միջոցով օտարելու համաձայնություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով:
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 3-րդ մասի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն՝ Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 571.3քմ ընդհանուր մակերեսով թվով 4 հողամասերը, հատուկ պահպանվող տարածքների հողերից 5380.3քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողերից 30.0քմ մակերեսով հողամասը, գյուղատնտնտեսական նշանակության հողերից 1510.0քմ մակերեսով հողամասը աճուրդի միջոցով օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջակությանը և հաստատել մեկնարկային գները՝ համաձայն կից աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 888-Ա)*

**<u>ԼՍԵՑԻՆ</u>**

***ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԱՌԿԱ ԹՎՈՎ 5 ՀԱՏ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով՝ Դիլիջան համայնքի ավագանին որոշում է․

1. Տալ համաձայնություն Դիլիջանի համայնքապետարանի հաշվեկշռում առկա թվով 5 հատ ծառայողական ավտոմեքենաները աճուրդային կարգով օտարելուն՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ կազմակերպել ավտոմեքենաների օտարման գործընթացը՝ համաձայն «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 889-Ա)*

**ԼՍԵՑԻՆ**

***ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***(Զեկ. ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ)***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին որոշում է.

Դիլիջան համայնքի ավագանու  հերթական  նիստի գումարման օր սահմանել 2025  թվականի մարտի 14-ին, ժամը  17-ին:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 890-Ա)*

Ավագանու անդամներ

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ԲԱՋԻՆՅԱՆ

ՔՐԻՍՏԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ԱԼԻԽԱՆՅԱՆ

ԱՐՇԱԿ ԽԵՄՉՅԱՆ

ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԹԱԹՈՒԼ ԳՈՒԼԻՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ԹԱԼԱՆՉՅԱՆ

ՆՈՒՆԵ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՇՈՒՇԱՆԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ*

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ_______________

*Նիստն արձանագրեց*՝ Սոնա Եգանյանը

________________________________